ՄՀԵՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Օսմանյան կայսրությունը իր գոյության ողջ ընթացքում վարել է ոչ մուսուլման բնակչության բռնի ձուլման քաղաքականություն: Ձուլման ամենատարածված մեթոդներից է եղել իսլամի պարտադրումը, այն է՝ բռնի իսլամացումը: Հարկ է նշել, որ բռնի իսլամացումը կիրառվել է ոչ մուսուլման բնակչության տարբեր տարիքային խմբերի նկատմամբ և տարբեր են եղել նաև դրա մեթոդները: Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք Օսմանյան կայսրությունում հայ երեխաների բռնի իսլամացման քաղաքականության և դրա մեթոդների առանձին տարրերին:

Օսմանյան կայսրությունում ոչ մուսուլման երեխաների բռնի իսլամացման տարածված և լայն կիրառում ունեցող միջոցներից է եղել դնշիրմեն՝ մանկահավաքը: Սա յուրահատուկ մի հարկատեսակ է եղել նախատեսված կայսրության քրիստոնյա բնակչության համար, իսկ դրա էությունը այն էր, որ պետությունը հավաքում էր քրիստոնյա ժողովուրդների տարբեր տարիքային խմբերի տղա երեխաներին, այնուհետև նրանց տրվում էր կրոնական (մուսուլմանական), ռազմական կրթություն և նրանց մի մասը հետագայում համալրում էր այդ մեթոդով ձևավորված ենիչերիների զորաբանակը: Որպես կանոն վաղ տարիքից իրենց արմատներից խլված և ռազմական ու կրոնական կրթություն ստացած այս զինվորները հատկապես մոլեռանդ էին. «Վաղ հասակից մոլեռանդ իսլամի ոգով դաստիարակվող ոչ մուսուլման երեխաները, որոնց մոտ գրեթե ամբողջությամբ ոչնչանում էր էթնիկ ինքնագիտակցությունը, հետագայում դառնում էին մոլի և դաժան զինվորներ, ինչպես նաև զբաղեցնում պատասխանատու դիրքեր»[1]: Հայտնի է նաև, որ այս զորագունդը մեծ դեր է խաղացել Օսմանյան կայսրության ներքաղաքական խնդիրներում: Պատմական աղբյուրների համաձայն Օսմանյան կայսրությունում առաջին տղայահավաքի տարեթիվը համարվում է 1395թ, թեև հավանական է, որ նման հավաքներ եղել են ավելի վաղ[2]: Տղայահավաքի համար ընտրվում էին

---

[1] Մելքոնյան Ռ., 20-րդ դարի ենիչերիները, Հանրապետական, Երևան, 2007, թիվ 9, էջ 5:

[2] Շաքարյան Ա., Արյան հարկը Օսմանյան կայսրությունում. Դնշիրմե, Երևան, 2006, էջ 37:

ամենաառողջ, ամենագեղեցիկ տղաները: Ընտրելով սերունդներից ամենալավերին՝ թուրքերը թուլացնում էին հպատակ ժողովուրդների ներուժը, որոնք կարող էին հետագայում դառնալ առաջնորդ: Սա կարելի է համարել ռազմավարություն, որով թուրքերը փորձում էին կանխել հետագայում քրիստոնյաների ապստամբությունները[3]: Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների շարքում դնշիրմեի է ենթարկվել նաև հայ ժողովուրդը. մանկահավաքը հայկական նահանգներում սկսել է ավելի ուշ և կատարվել է ավելի քիչ քան Բալկաններում[4]: Ենիչերիների կորպուսը վերացվել է 1826թ. և բնական է, որ դրանից հետո կայսրության տարածքում նման մասսայական տղայահավաքներ չեն իրականացվել:

Որոշակի փաստեր թույլ են տալիս ենթադրել, որ հայ երեխաների բռնի իսլամացումը շարունակվել է նաև ավելի ուշ՝ ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության անկումը: Մասնավորապես արձանագրվել են փաստեր 1915թ. Հայոց ցեղասպանության տարիներին որբ, անխնամ մնացած, կամ իրենց ծնողներից բռնի խլված հայ երեխաների բռնի իսլամացման մասին:

Համադրելով թուրքական տարբեր աղբյուրների ներկայացրած փաստերը թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը կարծիք է հայտնում, որ. «Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն ու ձուլումը կատարվել է երկու մակարդակով՝ պետության և հասարակության լայն խավերի կողմից. այս փաստը չի էլ ժխտվում թուրքերի կողմից, ուղղակի փորձ է արվում դա ներկայացնել այլ լույսի ներքո և օգտագործել քարոզչական նպատակով»[5]:

Կարելի է ասել, որ հայ երեխաների բռնի իսլամացման գործընթացում բավականին մեծ դեր են խաղացել և ջանքեր գործադրել նաև թուրք հասարակության լայն շրջանները: Հայոց ցեղասպանության տարիներին բազմաթիվ թուրքեր, քրդեր առևանգել և խլել են հայ մանուկներին, իսկ այնուհետև իսլամացրել: Թուրքական կողմը, չկարողանալով ժխտել այս փաստը, ներկայումս փորձ է անում ներկայացնել, որ իբրև թե «բարեգութ» թուրքերը փրկել են հայ երեխաներին[6]: Սակայն

---

[3] Նույն տեղում, էջ 61:

[4] Նույն տեղում, էջ 123:

[5] Մելքոնյան Ռ., Հայ երեխաների իսլամացումը Հայոց ցեղասպանության տարիներին (ըստ թուրքական աղբյուրների), Մերձավոր Արևելք, Երևան, 2008, հ. V , էջ113:

[6] Նույն տեղում, էջ 115:

այս ամենում ակնհայտ է եղել այդ «փրկարարների» մեծ մասի շահադիտական նկատառումները[7]:

Օսմանյան կառավարությունը իր հերթին ծնողներին կորցրած և անտեր մնացած հայ մանուկներին հավաքել և բաժանել է մուսուլման ընտանիքներին: Այս մասին օսմանյան աղբյուրներում պահպանվել է հատուկ հրաման՝ թվագրված 10 հուլիսի 1915թ.: Դրանում նշվում է, որ այս երեխաները հանձնվում են մուսուլման ընտանիքներին այն պայմանով, որ նրանց տրվի իսլամական կրթություն, բացի այդ հատուկ ուշադրություն է դարձվել, որ այդ երեխաներին բաժանեին այնպիսի վայրերում, որտեղ հայեր չկային[8]:

Բացի այդ թուրքական պետական կառույցների և առանձին գործիչների ջանքերով որբ հայ երեխաները հավաքվել են թուրքական որբանոցներում, որտեղ վերջիններիս տրվել է իսլամական կրթություն և ամեն ինչ արվել է նրանց թուրքացման համար: Այս որբանոցներից հիշատակման արժանի է «Ային թուրա» որբանոցը, որը գտնվել է Լիբանանում: Այն ստեղծվել է Ջեմալ փաշայի ջանքերով և այնտեղ հավաքվել էին հայ, քուրդ և թուրք երեխաներ: Որոշ աղբյուրների համաձայն, այնտեղ եղել է 1200 երեխա, որոնցից 1000-ը՝ հայ, իսկ մնացածը թուրք և քուրդ[9]: Փաստերը հաստատում են, որ որբանոցում հայ երեխաների հանդեպ տարվել է թուրքացնելու հստակ քաղաքականություն. նրանց տրվել է իսլամական կրթություն, հայկական անունները փոխվել են մուսուլմանա-թուրքականով: Հետաքրքիր է, որ այս անվանափոխման ժամանակ շատ հաճախ նախկին հայկական անուն ազգանվան առաջին տառերով կազմվել են թուրքական անուններ, օրինակ՝ Հարություն Նաջարյանը վերածվել է Համիդ Նազիմի, Պողոս Մերդանյանը՝ Բեքիր Մուհամադի, Սարգիս Սարաֆյանը՝ Սաֆվադ Սուլեյմանի և այլն[10]: Կան փաստեր, որոնք վկայում են, որ բացի իսլամի դասերից, հայ մանուկներին ստիպում էին օրը հինգ անգամ նամազ կատարել և ամեն երեկո երգել «Երկար կյանք Ջեմալ փաշային» երգը[11]:

Այս որբանոցում դասավանդելու կամ ավելի կոնկրետ հայ երեխաներին թուրքացնելու նպատակով Ջեմալ փաշան հրավիրում է հայտնի պանթյուրքիստ կին գրող Հալիդե Էդիփին: Հետագայում իր

---

[7] Նույն տեղում:

[8] Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 66.

[9] http://www.aztagdaily.com/EnglishSupplement/FEA_02012006_0001.htm

[10] Նույն տեղում:

[11] Նույն տեղում:

հուշերում Հալիդե Էդիփը ժխտել է ամերիկացի միսիոներների այն տեղեկությունները, թե այդ որբանոցում հայ երեխաներին բռնի թուրքացրել են[12]:

Կան նաև փաստեր, որոնք թույլ են տալիս խոսել 20-րդ դարի երկրորդ տասնամյակում որբ հայ երեխաներից կազմված Օսմանյան կայսրության վերջին և Թուրքիայի Հանրապետության առաջին ենիչերների մասին[13]: Հայտնի է, որ թուրք տխրահռչակ զորավար Քազիմ Քարաբեքիրը, արևելյան ճակատում, հավաքելով որբ, անտուն հայ երեխաներին, նրանց տվել է ռազմական բազմակողմանի կրթություն, ինչպես նաև դաստիարակել թուրքականության մոլի ոգով: Այս երեխաներից հետագայում կազմավորվում է այսպես կոչված «գյուրբուզլեր օրդուսու» (ամրակազմների բանակ) զորամիավորումը[14]:

Թուրքական աղբյուրներում Քազիմ Քարաբեքիրի այս քայլը ներկայացվում է, թե նա փրկել ու ուսուցում տվել է հայ որբերին[15]: Սակայն ակնհայտ է, որ այդ «փրկությունը» եղել է նրանց ազգային ինքնագիտակցության ոչնչացման և բռնի ուծացման գնով:

Վերոհիշյալ և բազմաթիվ այլ փաստեր թույլ են տալիս պնդել, որ Օսմանյան կայսրության ողջ գոյության ընթացքում իրագործված բռնի իսլամացման քաղաքականության կարևոր թիրախներից են եղել ոչ մուսուլման բնակչության երեխաները, որոնց բռնի ձուլման համար կիրառվել են տարբեր մեթոդներ:

---

[12] Նույն տեղում:

[13] Մելքոնյան Ռ., 20-րդ դարի ենիչերիները, Հանրապետական, Երևան, 2007, թիվ 9, էջ 6:

[14] Մելքոնյան Ռ., Հայ երեխաների իսլամացումը Հայոց ցեղասպանության տարիներին (ըստ թուրքական աղբյուրների), Մերձավոր Արևելք, Երևան, 2008, հ. V , էջ113:

[15] Başşyurt E., Ermeni evlatlıklar, İstanbul, 2006, s 58.